ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Մալթայի Հանրապետության կառավարության միջև մշակույթի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի վավերացման նպատակահարմարության մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Մալթայի Հանրապետության կառավարության միջև մշակույթի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի (այսուհետ՝ համաձայնագիր) նպատակն է զարգացնել և ամրապնդել համագործակցությունը մշակույթի բնագավառում, նպաստել երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը, որը հիմնված կլինի հավասարության ու փոխըմբռնման վրա և կհամապատասխանի երկու երկրների ազգային օրենսդրությանը:

Համաձայնագիրը հիմք կհանդիսանա թանգարանների, գրադարանների, արխիվների միջև, մշակութային ժառանգության պահպանության ոլորտներում ստեղծագործական կոլեկտիվների, մասնագետների, փորձագետների և տեղեկատվության փոխանակմանը, կնպաստի երկու երկրների մասնագետների մասնակցությանը ոլորտին առնչվող միջազգային մրցույթներին, գիտաժողովներին և հանդիպումներին:

Համաձայնագրի դրույթների կիրարկման նպատակով կստեղծվի համատեղ հանձնաժողով, որը բաղկացած կլինի յուրաքանչյուր կողմի հավասար թվով անդամներից, որոնք հաջորդաբար հանդիպումներ կգումարեն Երևանում և Վալետտայում:

Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի՝ ներքին օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերն ավարտելու մասին միմյանց ծանուցելու օրվանից և գործում է մինչև կողմերից մեկը գրավոր, դիվանագիտական ուղիներով ծանուցի մյուս կողմին

համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին: Համաձայնագրի գործողությունը կդադարի նման ծանուցումը ստանալուց վեց ամիս հետո:

Սույն համաձայնագրի վավերացումը կնպաստի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ մշակութային, ստեղծագործական գործունեության միջոցով հասարակական կյանքին մասնակցելու սահմանադրական իրավունքների ապահովմանը:

Ելնելով վերոգրյալից՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը նպատակահարմար է գտնում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մալթայի Հանրապետության կառավարության միջև մշակույթի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի վավերացումը: